ՀՀ վճռաբեկ քաղաքացիական դատարանին

բողոքաբեր՝

Արայիկ Միքայելի Զալյան
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Անձնագիր՝ AF 0384205, տրված 18.12.2001թ.
018-ի կողմից
հեռ. 077 651647

Պատասխանող՝

Գագիկ Ջհանգիրյան
ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն
Կ. Ուլնեցու փողոց 16/1

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ

(ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2013թ. նոյեմբերի 27-ի թիվ ԵԱՔԴ/0108/02/13 վճռի դեմ)
Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

2013թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նախագահող դատավոր Դ. Խաչատրյանի (այսուհետ՝ դատարան) քննության առնելով Արայիկ Զալյանի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.07.2013թ. վճռը բեկանելու պահանջով թիվ ԵԱՔԴ/0108/02/13 քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի ընդդեմ Գագիկ Ջհանգիրյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման, հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և հայցվորների անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջների մասին կայացրել է որոշում այն մերժելու մասին:

1. Գործի փաստական հանգամանքները.

1.1. 2012 թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահող դատավոր՝ Հարություն Մովսեսյանի, թիվ ՀՅՔՐԴ1/0046/01/08 քրեական գործով կայացված դատավճռով Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին ՀՀ քր. օր-ի 112 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 14-րդ կետերով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ և արդարացրել:

1.2. 2012 թ. դեկտեմբերի 18-ին www.aravot.am և www.lragir.am, էլեկտրոնային էջերում հրապարակվել են «Ջհանգիրյանը մեղքի զգացում բացարձակ չունի՝ Մատաղիսի գործով», «Մեղքը դուք ունեցեք, որ մարդասպանները դրսում են» և «Ջհանգիրյանը չի փոխել իր

կարծիքը Մատաղիսի գործով» վերնագրերով Գագիկ Ջհանգիրյանի կողմից տրված հարցազրույցները:

1.3. 2013թ. հունվարի 15-ին Ա. Զալյանի, Մ. Սերոբյանի և Ռ. Սարգսյանի կողմից ներկայացվել է հայցադիմում ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գագիկ Ջհանգիրյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման, հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու պահանջով:

1.4. 2013թ. մարտի 11-ին պատասխանող Գ. Ջհանգիրյանի ներկայացուցիչ Վ. Հովսեփյանի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան, որով խնդրել է մերժել հայցադիմումը:

1.4. 2013թ. մարտի 15-ին հայցվորների կողմից ներկայացվել է հայցադիմումը լրացնելու մասին դիմում, ըստ որի հայցադիմումի պահանջը ներկայացվել է ընդդեմ Գագիկ Ջհանգիրյանի՝պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման, հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և հայցվորներիս անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջների վերաբերյալ:

1.5. 2013թ. ապրիլի 2-ին պատասխանողի ներկայացուցիչ Վ. Հովսեփյանի կողմից ներկայացվել է առարկություն:

1.6. 2013թ. հուլիսի 16-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի կողմից ներկայացված հայցադիմումը Գ. Ջհանգիրյանի արտահայտություններում վիրավորական և զրպարտչական արտահայտություններ «չտեսնելով»:

1.7. 2013թ. սեպտեմբերի 16-ին Արայիկ Զալյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ, 1087.1-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրության 27-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածների խախտման հիմքով:

Վերաքննիչ դատարանից Ա. Զալյանը խնդրել է վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Բեկանել ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հուլիսի 16-ի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

1.8. 2013թ. նոյեմբերի 27-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԱՔԴ/0108/02/13 քաղաքացիական գործով կայացրել է վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում, որը պատճառաբանվել է հետևյալ կերպ.

1.8.1. «Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բողոք բերած անձի այն փաստարկին, որ վերացական արտահայտությունները, որոնք չեն նշում նշված անձանց անունները, բայց արտահայտում են առնչություն, Մատաղիսի գործի հետ, անմիջապես նույնականացվում են այդ երեք անձանց՝ Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի հետ»:

Այնուհետև դատարանը վկայակոչում է ՀՀ Սահմանադրության 14-րդ, 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. ապրիլի 27-ի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշումը[1]:

1.8.2. «Սույն գործով հաստատված փաստերի համաձայն՝ 18.12.2012թ. Գ. Ջհանգիրյանը չի փոխել իր կարծիքը Մատաղիսի գործով վերնագրերով Գագիկ Ջհանգիրյանի կողմից տրված հարցազրույցի համաձայն, ՀԱԿ անդամ Գագիկ Ջհանգիրյանը, խորհրդարանում լրագրողների հարցերին ի պատասխան, ստիպված է եղել անդրադառնալ Մատաղիսի գործին, որի մեկնարկը տրվել էր զինդատախազության տարիներին՝ ինը տարի առաջ: Չնայած Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանն այսօր վճիռ է կայացրել, որով արդարացրել է երեք երիտասարդներին, ում Գ. Ջհանգիրյանի զինդատախազությունը մեղադրել է իրենց ծառայակցին սպանելու համար՝ այնուհանդերձ ՀԱԿ-ի անդամ պատգամավորը հայտարարել է, որ մնում է իր կարծիքին: «Դրանք մարդասպաններ են և պետք է դատվեն, ես չեմ փոխել իմ կարծիքը», հայտարարել է Ջհանգիրյանը՝ ասելով, որ ոչ թե ինքը պետք է վատ զգա, այլ վատ պետք է զգան այլոք, որ մարդասպաններն ազատության մեջ են...: 18.12.2012 թվականին www.aravot.am էլեկտրոնային կայքում հրապարակված, Ջհանգիրյանը մեղքի զգացում բացարձակ չունի՝ Մատաղիսի գործով. «Մեղքը դուք ունեցեք, որ մարդասպանները դրսում են» հոդվածի համաձայն՝ Մի քանի լրագրողների հետ զրույցում մեր հարցերին, թե ինչպես կմեկնաբանեք, որ Մատաղիսի գործով արդարացման դատավճիռ է եղել, և Aravot.am-ի դիտարկմանը, որ փաստորեն տարիներ շարունակ այդ տղաներն անարդարացիորեն ազատազրկված են եղել, Գ. Ջհանգիրյանը արձագանքել է. «Ավելի լավ: Ուրեմն ինձանից հետո պաշտոնավարել է երկու զինվորական դատախազ: Երկրորդ զին. դատախազը նույն մեղադրանքով նույն անձանց վերաբերյալ այդ գործն ուղարկել է դատարան, երրորդ դատախազի օրոք այդ մեղադրանքը պաշտպանվել է դատարանում, դիմեք իրենց»: Դիտարկմանը, որ Դուք եք «կնքահայրը» նա պատասխանեց. «Ես ընդամենը կյանքումս մի երեխա եմ կնքել, ուրիշ որևէ մեկի կնքահայրը չեմ եղել: Ցտեսություն ձեզ»: Հարցերին՝ դուք ձեզ մեղավոր եք զգում՝ նա պատասխանեց. «Բացարձակ: Մարդասպանները պետք է նստեն, ես մնում եմ իմ կարծիքին»: Նա վստահեցրեց, որ շարունակում է պնդել, որ «դրանք մարդասպաններ են: Ճշտմանը՝ մեղքի զգացողություն չունեք, նա նետեց. «Մեղքը դուք ունեցեք, որ մարդասպանները դրսում են»:

Հայցվորների կողմից ներկայացված էլեկտրոնային կրիչում առկա «Ջհանգիրյանը Մատաղիսի գործի մասին» տեսանյութի համաձայն՝ Ջհանգիրյանը հայտնել է, որ ինքը Մատաղիսի գործի վերաբերյալ մի քանի անգամ արտահայտվել է թե՛ պաշտոնավարման ժամանակ, և թե՛ պաշտոնավարումից հետո: Ինքն այսօր էլ այն կարծիքին է, որ այդ երիտասարդներն են կատարել այդ հանցագործությունը, և ոչ մի վայրկյան չի կասկածում դրա մեջ, և, եթե Ջհանգիրյանը, քննչական խմբի անդամները, քննիչը, օպերատիվ խմբի

1. Տես՝ վիճարկվող որոշման 12-16 էջեր

անդամները ապօրինի գործողություններ էին կատարել, ապա իրեն կարող էին մեղադրել և դատել արդարադատության դեմ ծանր հանցագործություն կատարելու համար: Ինքը ոչինչ չունի մեկնաբանելու, հատկապես որ իրենից հետո պաշտոնավարել են, և այժմ պաշտոնավարում է երրորդ զինվորական դատախազը: Երկրորդ զինվորական դատախազի հաստատմամբ նույն մեղադրանքով նույն անձանց վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան, իսկ երրորդ զինվորական դատախազի գործունեության ժամանակ այդ մեղադրանքը պաշտպանվել է դատարանում, և, ինչքան իրեն է հայտնի, մեղադրողները միջնորդել են արարքը ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունից վերաորակել ծանր մարմնական վնասվածք հասցնելը, որը հանգեցրել է մահվան, և պահանջել են յոթ, թե ութ տարի ազատազրկում մեղադրյալների համար: Այսինքն մեղադրողները համոզված են եղել, որ այդ հանցագործությունը կատարել են այդ երիտասարդները, և եթե նույնիսկ վերաորակել են արարքը, այնուամենայնիվ, զինվորական դատախազը ծանր պատիժ է միջնորդել: Թե հետագայում ինչ ընթացք կստանա այդ գործը, կբողոքարկվի դատավճիռը, թե ոչ, պետք է որոշեն մեղադրողները: Ինքը բացառում է ֆիզիկական ուժ կիրառելը, ինքը երբևէ որևէ զինվորի մատով չի կպել: Մատաղիսի գործով ընդհանրապես խոշտանգելու, ֆիզիկական ուժ գործադրելու որևէ խնդիր չի եղել, քանի որ մեղադրյալն իր կամքով, իր ցանկությամբ տեսանկարահանող սարքի առաջ փաստաբանի ներկայությամբ մի քանի ժամ տևած հարցաքննության է մասնակցել և իր ձեռքով ցուցմունք է գրել, և այդ բոլոր տեսաձայնագրությունները կան: Ինքն ուզում է հուսալ, որ մարդասպանները պետք է պատժվեն: 18.12.2012 թվականին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՀՅՔԴ1/0046/01/08 քրեական գործով դատավճռի համաձայն՝ «Ռազմիկ Թորգոմի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 14-րդ կետերով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունը ապացուցված չլինելու հիմքով: Մուսա Արտաշի Սերոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 14-րդ կետերով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունը ապացուցված չլինելու հիմքով: Արայիկ Միքայելի Զալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 14-րդ կետերով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունը ապացուցված չլինելու հիմքով»:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ պատասխանողի կողմից արված արտահայտությունները ուղղված չեն եղել կոնկրետ անձանց շրջանակին, մասնավորապես՝ սույն գործով հայցվորներ Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին, քանի որ պատասխանողը չի նշել կոնկրետ անձանց անուններ, այլ միայն օգտագործել է «դրանք» ցուցական դերանունը:

1.8.3. Վերաքննիչ դատարանը վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունը ևս արձանագրում է, որ պատասխանողը հանդիսանալով հատուկ սուբյեկտ, արտահայտել է կարծիք մի գործի վերաբերյալ, որի նախաքննությունն իրականացվել է իր՝ զինվորական դատախազի պաշտոնում պաշտոնավարման ժամանակ,

նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացրել է նրա ղեկավարած կառույցը և մեղադրական եզրակացությունը հաստատվել է նրա կողմից:

1.8.4. Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ և՛ Դատարան ներկայացված հայցադիմումով, և՛ վերաքննիչ բողոքում պատասխանող կողմը պնդել է, որ դիտավորություն չի ունեցել վիրավորելու և զրպարտելու սույն գործով հայցվորներ՝ Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին:

Ամփոփելով վերոգրյալը Վերքաննիչ դատարանն արձանագրում է, որ Գագիկ Ջհանգիրյանի կողմից արված արտահայտությունները չեն համարվում վիրավորանք և զրպարտություն, քանի որ բացակայում է վիրավորանքի և զրպարտության բնութագրման չափանիշների միաժամանակյա առկայությունը, որպիսի պայմաններում բողոքն այս հիմքով հիմնավոր չէ, իսկ Դատարանի եզրահանգումն իրավաչափ է:

1.8.5. Անդրադառնալով բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում հղում կատարված Ա1+ հեռուստաընկերության «Պոստ սկրիպտում» հաղորդաշարի հարցազրույցին, ԳԱԼԱ հեռուստաընկերության տեսանյութին, ինչպես նաև վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածով սահմանված են վերաքննության սահմանները, մասնավորապես նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, իսկ 2-րդ մասով սահմանված է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

Նշված իրավանորմի վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից հստակ սահմանվել են վերաքննիչ բողոքի քննության սահմանները՝ ապացույցների գնահատման առումով, մասնավորապես հարկ է նշել, որ Վարաքննիչ դատարանը բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք արդեն իսկ ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

Տվյալ դեպքում, բողոք բերած անձը, նշված ապացույցները չի ներկայացրել ընդհանուր իրավասության դատարանում, սակայն հարկ է նշել, որ վերջինս զրկված չի եղել գործի քննության ժամանակ դրանք ներկայացնելու իր դատավարական իրավունքից, որպիսի պայմաններում հարկ է նշել, որ այդ ապացույցները չեն կարող քննության առարկա դարձվել Վերաքննիչ դատարանում:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքարկվող դատական ակտով դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, մասնավորապես.

Դատարանի կողմից խախտվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ, 1087.1-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ

Սահմանադրության 27-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածները.

2.1.Դատարանի 1-ին պատճառաբանությունը Գ. Ջհանգիրյանի արտահայտություններում վիրավորանք և զրպարտություն չտեսնելու վերաբերյալ կայանում է հետևյալում.

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պատասխանողի կողմից արված արտահայտությունները ուղղված չեն եղել կոնկրետ անձանց շրջանակին, մասնավորապես՝ սույն գործով հայցվորներ Արայիկ Ջալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին, քանի որ պատասխանողը չի նշել կոնկրետ անձանց անուններ, այլ միայն օգտագործել է «դրանք» ցուցական դերանունը[2]:

2.1.1. Այսպես՝ մարդու իրավունքների Եվրոպական դատարանը վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ հարցերը դիտարկել և քննարկել է Կոնվենցիայի 10-րդ՝ արտահայտվելու ազատության, և 8-րդ՝ անձնական կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի հոդվածների շրջանակներում: Դատարանը սահմանել է դրանց հավասարակշռման տեստ՝ պահպանելով անձի բարի համբավը, հեղինակությունն ու պատիվը: Զրպարտությունից և վիրավորանքից անձի հեղինակությունն ու պատիվը պաշտպանելու համատեքստում դատարանն անդրադարձել և մեկնաբանել է այնպիսի դեպքեր, որտեղ հնչեցված վիրավորական և զրպարտող արտահայտությունները անձնավորված չեն եղել և դրանցում մատնանշված չէ կոնկրետ անձ՝ իր անվամբ և ազգանվամբ, այսինքն՝ այն դեպքերը, որտեղ ներկայացվում են «վերացական արտահայտություններ»: Նման դեպքերի համար Դատարանը սահմանել է «ճանաչելիության տեստ»՝ ապահովելով նաև անձի պաշտպանությունը զրպարտությունից և վիրավորանքից, անանուն կամ վերացական արտահայտություններից: Դատարանը սահմանել է, որ անձը ենթակա է պաշտպանության բոլոր այն դեպքերում, երբ հնչեցված վերացական արտահայտությունները ներկայացնում, հրապարակում են այնպիսի հանգամանքներ, տվյալներ կամ փաստեր, որոնք բավարար հնարավորություն են ընձեռում ընթերցողին այդ արտահայտություններով կոնկրետ անձի նույնականացնելու համար:

Թոմասն ընդդեմ Լյուքսեմբուրգի[3] գործում ռադիոյով հրապարակվել է մի նյութ, որտեղ որևէ կոնկրետ անձ կամ անուն չի մատնանշվել, այլ ընդհանրական կարգով օգտագործվել է «Զրային և անտառային հարցերի հանձնաժողով» արտահայտությունը՝ մեղադրելով վերջինիս աշխատակիցներին պաշտոնական լիազորությունների չարաշահման մեջ: Նույն հանձնաժողովի մի քանի աշխատակիցներ հայց են ներկայացրել ռադիոյով հրապարակված նյութի հեղինակի դեմ՝ իրենց զրպարտելու համար: Քննելով այդ գործը և անդրադառնալով այն հարցին, թե արդյոք կոնկրետ անձինք կարող են իրենց պատվի և արժանապատվության պաշտպանություն հայցել, երբ իրենց անունները կոնկրետ օգտագործված չեն, Դատարանը եզրահանգել է «...թեև ռադիոյով հրապարակված

2. Տես՝ սույն բողոքի 1.8.2-րդ կետը
3. Տես՝ Thomas v. Luxemburg, 38432/97, 29 մարտ, 2001, կետ 56, 58

հաղորդման մեջ ներկայացված նյութում որևէ անձի անուն նշված չէր, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ Լյուքսեմբուրգում գործում է միայն մեկ «Զրային և անտառային հարցերի հանձնաժողով, և դրանում ներգրավված աշխատակիցներ ինժեներների և պահակների թիվը մեծ չէ, ուստի այդ աշխատակիցները հեշտությամբ կարող են նույնականացվել ռադիոլսողների կողմից»: Բացի այդ, Դատարանը ուշադրության է հրավիրել նաև այն հանգամանքին, որ նշված հարցը հանրության կողմից մեծ քննարկումների է արժանացել և իրենից ներկայացրել է հանրային հետաքրքրության հարց, ուստի այս կերպ ևս նշված հանձնաժողովի աշխատակիցները հանրության համար հեշտությամբ ճանաչելի են եղել նույնիսկ առանց վերջիններիս անունների կոնկրետ հրապարակման: Դատարանը շեշտել է, որ տվյալ երկրի աշխարհագրական տարածքի չափը ևս պետք է դիտարկել առանձնահատուկ հանգամանք, որի շնորհիվ ևս ռադիոհաղորդման մեջ ներկայացված անձինք հեշտությամբ ճանաչելի են եղել ռադիոլսողներին նույնիսկ առանց վերջիններիս անունների հրապարակման: Փաստացի, սույն գործով Դատարանի կողմից կիրառված «ճանաչելիության տեստը» հետևյալն է.

1. գործում է արդյոք նույն անունն ունեցող մեկ այլ հանձնաժողով, թե ոչ,

2. արդյոք հանձնաժողովի անդամների թիվն այնքան մեծ է, որ հնարավորություն չի ընձեռվի ռադիոլսողներին նույնականացնել արտահայտությունները կոնկրետ անձանց հետ,

3. մինչև այդ ռադիոհաղորդման հրապարակումը ինչ աստիճանի հանրային հետաքրքրություն է ներկայացրել տվյալ հարցը:

Եվրոպական դատարանի կողմից սահմանված «ճանաչելիության տեստը» կիրառելի է նաև սույն գործի շրջանակներում և հնարավորություն է ընձեռում հայցվորներիս իրավական պաշտպանություն ստանալ մեր հասցեին հնչեցված անանուն զրպարտչական արտահայտություններից:

2.1.2. Այսպես, *«Մատաղիսի գործ»* արտահայտությունը բացառապես շրջանառության մեջ է մտել և դարձել հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող հարց 2004 թվականից, երբ Լեռնային Ղարաբաղի Մատաղիսի տարածաշրջանի զորամասում սպանված 2 զինծառայողների գործով սկսվել է նախաքննություն[4]: Այդ ժամանակից սկսած ձևավորվել է հասարակական պահանջարկ՝գործով ամբաստանյալներ Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի պաշտպանության համար: Ինչպես հաղորդում է *Iragir.am* էլեկտրոնային տեղեկատվական կայքը՝ 2012 թվականին նախագահական նստավայրի մոտ հերթական բողոքի ակցիան է կազմակերպվել Մատաղիսի գործով[5]: Նշված հրապարակումները վկայում են, որ սույն գործը հանրային մեծ հնչեղություն է ստացել և հանրությունը հետաքրքրված է եղել գործի ելքով: «Մատաղիսի գործ» անունը կրող և դրանում ներգրավված հանրության համար ճանաչելի դարձած Արայիկ Զալյան, Մուսա Սերոբյան և Ռազմիկ Սարգսյան անուններն ու արտահայտությունները միակն են ու դրանց համակցությամբ երկրորդ գործ ՀՀ-ում մինչ օրս գոյություն չունի:

---

4. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքի կից ներկայացված հավելված 2-րդը «Ստեփանակերտի ՔԿՀ-ում հսկիչները շներով էին շրջում», Անահիտ Բաղդասարյանի նյութը

5. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 3-րդ հավելվածը «Բողոքի ակցիա նախագահականի մոտ, Մատաղիսի գործով», Կարինե Իոնեսյանի նյութը,

Globus վերլուծական ամսագրի 2012 թվականի 5-րդ համարում հրապարակված հետազոտության արդյունքների համաձայն[6]՝ Հայաստանում բնակչության մոտ 47,1% հանդիսանում է ինտերնետ օգտագործող: Առավել հաճախակի օգտագործվող էլեկտրոնային կայքերի շարքում նույն ամսագրի հետազոտության համաձայն՝ 2-րդ տեղում գտնվում է ***YouToube*** էլեկտրոնային կայքը, իսկ 4-րդ տեղում՝ *Google.am* որոնողական էլեկտրոնային կայքը[7]: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ էլեկտրոնային կարգով հրապարակումները ՀՀ հանրության համար բավականին մատչելի ու հեշտ հասանելի են: Այս հանգամանքը կարող է վկայել, որ «Մատաղիսի գործի» վերաբերյալ էլեկտրոնային կարգով հրապարակված նյութերը հանրության շրջանում լայն շրջանառություն են ստացել: Առավել ևս, երբ *Google.am* որոնողական համակարգը որպես «Մատաղիսի գործ» որոնման արդյունք 0.14 վայրկյանում հայտնաբերել է 340.000 նյութ՝ արդյունք, այդ թվում տարբեր վիդեո տեսանյութեր և հոդվածներ, որտեղ պատկերվում են նկարներ՝ բացառապես Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի մասնակցությամբ[8]: Հենց առաջին հոդվածն ու տեսանյութը ներկայացնում են Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի անունները և վերջինիս նկարները[9]: Նույն որոնողական համակարգը «Մատաղիսի գործ» անունը կրող արտահայտությամբ, բացի «մեղադրյալներ» Արայիկ Զալյանից, Մուսա Սերոբյանից և Ռազմիկ Սարգսյանից այլ անձանց որպես մեղադրյալ չի ներկայացնում: Ներկայացված հոդվածների պաշտոնական կայքերի համաձայն՝ հոդվածները ընթերցել են միջինը 120 անգամ: Այսինքն, եթե նույնիսկ ընթերցված լինի *Google.am* որոնողական համակարգի կողմից հայտնաբերված 340.000 նյութից ընդամենը 10-ը, ապա առնվազն 12.000 մարդ «Մատաղիսի գործով» ճանաչում է Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին:

Ավելին, ***YouTube*** տեսահոլովակ տարածման և դիտման հնարավորություն ընձեռող կայքում «Մատաղիսի գործ» որոնման արդյունքում տրամադրում է 335 տեսանյութ, որտեղ հարցազրույցին մասնակցում են տարբեր անձինք, այդ թվում նաև՝ Գագիկ Ջհանգիրյանը, որը խոսում է «Մատաղիսի գործի» մասին: YouTube-ում առկա առանձին տեսանյութեր, ըստ դրանց վերաբերյալ առկա տեղեկատվության, ունեցել են մինչև ***5096 դիտողներ***, օրինակ՝ «Բանակն իրականում» նախաձեռնության պատրաստած նյութը, որտեղ Մաղաղիսի գործով տուժողի իրավահաջորդ Հովսեփ Մկրտումյանը մանրամասն պատմում է Մաղաղիսի գործի մանրամասների մասին՝ խոսելով նաև Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի մասին՝ որպես «Մատաղիսի» գործով նախկին մեղադրյալների և դատապարտյալների[10]:

Մեկ այլ տեսանյութում, որը վերնագրված է «Արայիկ Զալյան Մատաղիսի գործ[11]» ֆիլմ է Արայիկ Զալյանի մասնակցությամբ, որտեղ վերջինս մանրամասն պատմում է գործի հանգամանքները: Բացի այդ, տեսանյութը կոնկրետ հատվածներ է պարունակում

6. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 4-րդ հավելվածը "Globus" analytical journal,
7. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 4-րդ հավելվածը
8. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 5-րդ հավելվածը
9. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 6-րդ հավելվածը
10. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 7-րդ հավելվածը (http://www.youtube.com/watch?v=UQWPFeoSRns),
11. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 8-րդ հավելվածը (http://www.youtube.com/watch?v=k5nkl_ex2CA),

դատական նիստից, որտեղ ևս պատկերվում են Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանը և Ռազմիկ Սարգսյանը:

2013 թվականի հունվարի 14-ին նույն YouTube էլեկտրոնային կայքում iravaban.net էլեկտրոնային տեղեկատվական կայքի կողմից տարածվել է մեկ այլ տեսանյութ, որը ներկայացնում է Ռազմիկ Սարգսյանի հարցաքննությունը Մատաղիսի գործի կապակցությամբ[12]: Տեսանյութը կրում է հետևյալ մեկնաբանությունը՝ «Մահացած զինվոր Ռոման Եղիազարյանի իրավահաջորդները պնդում են, որ իրենց որդուն սպանել են Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանը և Ռազմիկ Սարգսյանը»: Տեսանյութը դիտվել է 1598 անգամ:
2012 թվականի դեկտեմբերի 18-ին ԳԱԼԱ հեռուստաընկերությունը պատրաստել և տարածել է մի տեսանյութ «Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը բոպեներ առաջ անմեղ է ճանաչել աղմկահարույց Մատաղիսի գործով մեղադրյալ երեք երիտասարդներին» խորագրով, որն այնուհետև ներկայացնում է դատարանի կողմից Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի անունների հրապարակումը՝ որպես արդարացվածների: Տեսանյութում որպես նախկին մեղադրյալներ ներկայացվում են երեք երիտասարդները՝ Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանը և Ռազմիկ Սարգսյանը: Նույն տեսանյութում հարցազրույց է տալիս նաև Արայիկ Զալյանը՝ որպես նախկին մեղադրյալ: Այս տեսանյութը դիտվել է 4113 անգամ[13]:

Նշված էլեկտրոնային հրապարակումները, որպես ապացույց, վկայում են, որ «Մատաղիսի գործը» մեծ հնչեղություն և հետաքրքրություն է ունեցել հանրության շրջանում, այն եղել է միակը և բոլոր հրապարակումներում նույնականացվել է բացառապես Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի հետ: Հետևաբար, նույնիսկ այն վերացական արտահայտությունները, որոնք չեն նշում նշված անձանց անունները, բայց արտահայտում են առնչություն «Մատաղիսի գործի հետ», անմիջապես նույնականացվում են այդ երեք անձանց՝ Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի հետ:

Տվյալ փաստական հանգամանքների վերաբերյալ հայցվոր Արայիկ Զալյանն Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում սույն հայցի շրջանակներում ցուցմունք տալու ժամանակ դատարանին ներկայացրել է վկայակոչված փաստերի վերաբերյալ պնդումներ[14]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ հանրահայտ հանգամանքներն ապացուցման կարիք չունեն:

Սույն կետում նշված փաստական և իրավական հիմնավորումները հիմք են տալիս արձանագրելու, որ Գ. Ջհանգիրյանի կողմից կատարված արտահայտություններն ուղղված են կոնկրետ հայցվորներ Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին իսկ Դատարանի պատճառաբանությունը ուղակի առարկայազուրկ է:

---

12. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 9-րդ հավելվածը (http://www.youtube.com/watch?v=mS6WiEEYlY0),
13. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 10-րդ հավելվածը (http://www.youtube.com/watch?v=djLDJ-4a4dc),
14. Տես՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում Արայիկ Զալյանի ցուցմունքը, դատական նիստերի արձանագրություններում:

2.1.3. Որպեսզի խոսքի և կարծիքի ազատ արտահայտելու իրավունքը լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայությունն արժևորող դատողությունների և այն անձնավորության միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձնավորության հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որպեսզի սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին կամ էլ, որ հենց ինքն է հանդիսացել որպես քննադատության թիրախ (Dyuldin and Kislov v. Russia, գանգատ թիվ 25968/02, 31-ը հոկտեմբերի 2007 թվական, պարբ. 38):

Սույն պարագայում Գ. Ջհանգիրյանը 2012թ. դեկտեմբերի 18-ի lragir.am[15] էլեկտրոնային կայքէջում հրապարակել է «Ջհանգիրյանը չի փոխել իր կարծիքը Մաղաղիսի գործով» նյութը ըստ որի.

«ՀԱԿ անդամ Գագիկ Ջհանգիրյանը խորհրդարանում լրագրողների հարցերին ի պատասխան ստիպված է եղել անդրադառնալ Մատաղիսի գործին, որի մեկնարկը տրվել էր իր զինդատախազության տարիներին՝ ինը տարի առաջ: Չնայած Շիրակի մարզի Ընդհանուր իրավասության դատարանն այսօր վճիռ է հրապարակել, որով արդարացրել են երեք երիտասարդներին, ում Ջհանգիրյանի զինդատախազությունը մեղադրել է իրենց ծառայակցին սպանելու համար, այնուհանդերձ ՀԱԿ-ի անդամ պատգամավորը հայտարարել է, որ մնում է իր կարծիքին: «Դրանք մարդասպաններ են և պետք է դատվեն, ես չեմ փոխել իմ կարծիքը», հայտարարել է Ջհանգիրյանը, ասելով, որ ոչ թե ինքը պետք է վատ զգա, այլ վատ պետք է զգան այլոք, որ մարդասպաններն ազատության մեջ են:

Գագիկ Ջհանգիրյանի դիրքորոշումը հասկանալի է: Տարօրինակ կլիներ, եթե նա հայտարարեր, թե գիտեք, սխալվել եմ: Դա պարզապես կլիներ ինքնախոստովանական ցուցմունքի պես մի բան: Այնպես որ, միանգամայն բնական է, որ Ջհանգիրյանը մնում է իր «գծի» մեջ:

Այլ խնդիր է, թե ինչ գծի մեջ է մնում Մատաղիսի գործը: Որքան հայտնի է, դատարանն այն ուղարկել է նոր քննության՝ արդարացնելով «ջհանգիրյանական» քննությամբ մեղադրյալ դարձած եւ հետո ազատազրկված տղաներին:

Մատաղիսի գործը հանրային մեծ ուշադրության կենտրոնում էր: Ներկայումս, այդ ուշադրությունը թերեւս պետք է բազմապատկվի, քանի որ այն հաջողությունը, որ արձանագրվել է, ինչպես նաև այդ ուշադրության, իսկ գուցե նաև հենց առաջին հերթին այդ ուշադրության շնորհիվ, դեռեւս կես ճանապարհին է:

Բանն այն է, որ խնդիրը միայն երեք երիտասարդի ճակատագիրը չէ: Պետք չէ մոռանալ զոհված երիտասարդներին: Այսինքն, անմեղներն արդարացված են, բայց դեռ պետք է պատժվեն մեղավորները, ովքեր սպանել են Մատաղիսի զորամասի զինվորին: Եվ այդ իմաստով, Մատաղիսի գործը ոչ միայն փակված չպետք է լինի հանրային իմաստով, այլ

15. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 11-րդ հավելվածը (http://www.lragir.am/index.php/arm/0/right/view/76219)

հասարակությունը պետք է առավել աշխույժ վերահսկողություն հաստատի նոր քննության մասով:

Այդ ժամանակ արդեն Գ. Ջհանգիրյանի հետ հնարավոր կլինի խոսել այլ դիրքերից: Բայց, կոնկրետ ազատազրկված տղաներն իհարկե իրավասու են հայց ներկայացնել ընդդեմ իրենց հանիրավի մեղադրած եւ դատապարտած անձանց, պահանջելով փոխհատուցում եւ հասնելով նրան, որ այդ մարդիկ իրավական պատասխան տան իրենց սխալի համար: Միևնույն ժամանակ, այստեղ խնդիր ունի նաև Շիրակի մարզի դատավորը, որ կայացրել է արդարացման որոշումը: Գ. Ջհանգիրյանը փաստորեն նրան մեղադրում է՝ անուղղակի, մարդասպաններին ազատ արձակելու համար: Ինչո՞վ եւ ինչպես կպատասխանի դատավորը, պարզ չէ: (.....)»:

Վերը վկայակոչված հրապարակումը սույն գործով փաստական հանգամանք է, որը սովորական ընթերցողն էլ չի կարող չզգալ, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուներիս, ավելին հայցվորներիս և մեզ ճանաչող յուրաքանչյուրի կողմից ընթերցելու արդյունքում յուրաքնաչյուրն էլ կհասկանա, որ հենց Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանը և Ռազմիկ Սարգսյանն են հանդիսացել որպես քննադատության թիրախ:

Վերը վկայակոչված lragir.am[16] էլեկտրոնային կայքէջում հրապարակված նյութի և Եվրոպական դատարանի (Dyuldin and Kislov v. Russia, գանգատ թիվ 25968/02, 31-ը հոկտեմբերի 2007 պարբ. 38) վճռի մեկնաբանությունը միանշանակ կարելի է պնդել, որ Գ. Ջհանգիրյանի կողմից կատարված արտահայտությունները չեն կրել վերացական բնույթ այլ ուղղված են եղել կոնկրետ հայցվորներիս, նպատակ հետապնդելով, արատավորելու նրանց բարի համբավը:

2.2. Դատարանի 2-րդ պատճառաբանությունը Գ. Ջհանգիրյանի արտահայտություններում վիրավորանք և զրպարտություն չտեսնելու վերաբերյալ կայանում է հետևյալում.

Վերաքննիչ դատարանը վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունը ևս արձանագրում է, որ պատասխանողը հանդիսանալով հատուկ սուբյեկտ, արտահայտել է կարծիք մի գործի վերաբերյալ, որի նախաքննությունն իրականացվել է իր՝ զինվորական դատախազի պաշտոնում պաշտոնավարման ժամանակ, նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացրել է նրա ղեկավարած կառույցը և մեղադրական եզրակացությունը հաստատվել է նրա կողմից[17]:

- Դատարանի կողմից վկայակոչված այն հանգամանքը, թե Ջհանգիրյանը հանդիսանալով հատուկ սուբյեկտ, արտահայտել է կարծիք մի գործի վերաբերյալ, որի նախաքննությունն իրականացվել է իր՝ զինվորական դատախազի պաշտոնում պաշտոնավարման ժամանակ, նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացրել

16. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 11-րդ հավելվածը (http://www.lragir.am/index.php/arm/0/right/view/76219)
17. Տես՝ սույն բողոքի 1.8.3-րդ կետը

է նրա ղեկավարած կառույցը և մեղադրական եզրակացությունը հաստատվել է նրա կողմից: Սույն քաղաքացիական գործի շրջանակներում և գործի նյութերում չի եղել նման ապացույց, թե հայցվոր կողմը, թե պատասխանող կողմը որպես ապացույց դատարան չի ներկայացրել Գ. Ջհանգիրյանի մատաղիսի գործով մեղադրանքը պաշպանելու կամ հաստատելու վերաբերյալ: Դատարանը իր պատճառաբությունում և եզրակացությունը կատարել է մի ապացույցի վրա հիմնվելով, որը դատարանում չի հետազոտվել, անգամ չի եղել ապացույցների շարքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում»:

Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»:

Սույն քաղաքացիական գործի շրջանակներում, եթե անգամ դատարանների կողմից չկայացվեր արդարացման դատավճիռ և չլիներ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և Ջհանգիրյանը տվյալ հանգամանքներում կատարեր «Դրանք մարդասպաններ են և պետք է դատվեն, ես չեմ փոխել իմ կարծիքը» արտահայտությունը, նա պարտավոր էր ապացուցել տվյալ պահին իր կողմից հրապարակած փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (քաղ. օր. 1087.[1]-րդ հոդվածի 4-րդ մաս):

2.3. Դատարանի 3-րդ պատճառաբանությունը Գ. Ջհանգիրյանի արտահայտություններում վիրավորանք և զրպարտություն չտեսնելու վերաբերյալ կայանում է հետևյալում.

«Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ և՛ Դատարան ներկայացված հայցադիմումով և՛ վերաքննիչ բողոքում պատասխանող կողմը պնդել է, որ դիտավորություն չի ունեցել վիրավորելու և զրպարտելու սույն գործով հայցվորներ՝ Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին»:

Ամփոփելով վերոգրյալը Վերքաննիչ դատարանն արձանագրել է, որ Գագիկ Ջհանգիրյանի կողմից արված արտահայտությունները չեն համարվում վիրավորանք և զրպարտություն, քանի որ բացակայում է վիրավորանքի և զրպարտության բնութագրման

չափանիշների միաժամանակյա առկայությունը, որպիսի պայմաններում բողոքն այս հիմքով հիմնավոր չէ, իսկ Դատարանի եզրահանգումն իրավաչափ է[18]:

2.3.1. Սույն կետում նշված դատարանի այն պատճառաբանությունը թե իբր Ջհանգիրյանը դիտավորություն չի ունեցել վիրավորելու հայցվորներին և վերաձևակերպել իր արտահայտությունները, և այն շտկել է դատարանում՝ նշելով, որ կատարված արտահայտություններն ուղղված են անձանց անորոշ շրջանակի, կոնկրետ անձանց՝ հայցվորների անուն, ազգանունը չի հիշատակվում, այդ արտահայտություններն առանց կոնկրետ հասցեատիրոջ, անձանց անորոշ շրջանակին ուղղված գնահատող դատողություններ են[19] անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ:

- Այսպես՝ 2012թ. հունվարի 15-ին դատարան ներկայացված հայցադիմումին կից հայցվորների կողմից ներկայացրվել է 2012թ. դեկտեմբերի 12-ին www.ilur.am-ում հրապարակված Ջհանգիրյանի հարցազրույցը էլեկտրոնային կրիչով, որը նկարահանված է ոչ, թե ոտքի վրա Ազգային Ժողովում, կամ միամիտ, այլ տվյալ տեսանյութը դիտելիս ակնհայտ է, որ Ջհանգիրյանը նախապես պատրաստված տալիս է հարցազրույց, ընդորում, իր ցանկությամբ, որն իր համար մեծ հնարավորություն էր շտկելու ազգային ժողովում իր կողմից արված վիրավորանք և զրպարտություն պարունակող արտահայտությունները:

Ջհանգիրյանի կողմից տրված հարցազրույցը նույնպես իր մեջ պարունակում է հայցվորների նկատմամբ վիրավորանք և զրպարտություն պարունակող տեղեկություններ, որի վերաբերյալ դատարանում ներկայացվել են համապատասխան պնդումներ:

- 2013 թվականի հունիսի 20-ին, երբ սույն քաղաքացիական գործի քննությունը գտնվում էր դատաքննության փուլում՝ A1+ հեռուստաընկերության «Պոստ սկրիպտում[20]» հաղորդաշարի հարցազրույցը Աժ պատգամավոր ՀԱԿ խմբակցության անդամ, նախկին զինվորական դատախազ՝ Գագիկ Ջհանգիրյանի հետ հաղորդաշարի 19-րդ բոպեի 40-րդ վայրկյանում հաղորդավար Արամ Աբրահամյանը հետևյալ հարցն է ուղղում հաղորդաշարի հյուրին՝ Գագիկ Ջհանգիրյանին:

Հարց: Մատաղիսի գործում ինչու են Ձեզ ներգրավվել, սա ինչ պատմություն է, հարցնում է հեռուստադիտողը:

Պատասխան: Որևէ գործով, առավել ևս Մատաղիսի գործով ես ներգրավված չեմ: Սա մեր մամուլի թեթև ձեռքով ստեղծվող, ես կարծում եմ՝ իշխանական մամուլի հնարքներից մեկն է: Երբ որ Գյումրիի առաջին ատյանի դատարանը արդարացման դատավճիռ արձակեց, այդ 3 անձանց՝ նախկին ամբաստանյալների (հուսամ, որ երբևիցե կարող է այդ վիճակը վերականգնվել), այդ նախկին ամբաստանյալների վերաբերյալ, լրագրողների այսպես մեծ ճնշում, հոսք եղավ իմ վրա և փորձեցին ճշտել, թե ես փոխել եմ իմ կարծիքը, թե ոչ, ես էլ ասեցի, որ ոչ, ես իմ կարծիքը չեմ փոխել: <u>Իմ կարծիքով այդ սպանությունները կատարել են այդ մարդիկ, և ես մնում եմ իմ կարծիքին</u>: Հետո պարզվեց, որ այդ նախկին

18. Տես՝ սույն բողոքի 1.8.4-րդ կետը
19. Տես՝ վիճարկվող վճռի 22-րդ էջը
20. Տես՝ 16.08.2013թ. վերաքննիչ բողոքին կից ներկայացված 12-րդ հավելվածը «Պոստ սկրիպտում» հաղորդաշարի նյութը

ամբաստանյալները հայցադիմումով դիմել են դատարան և ինձանից փոխհատուցում են պահանջում և գտնում են, որ ես վիրավորել եմ նրանց և զրպարտել եմ: Սա է խնդիրը:

- Ավելին՝ Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանի, առարկության և դատարանում ներկայացրած իր դիրքորոշումներում նրա կողմից երբևիցե չի նշվել, այն հանգամանքը, որ ինքը չէր ուզում ասել այն, ինչը հրապարակվել է մամուլով, պատասխանողը շարունակել է պնդել, որ իր ասածը չի վերաբերվում հայցվորներին:

Դատարանն իր մեկնաբանությամբ լռելյայն ընդունում է Ջհանգիրյանի կողմից կատարված հրապարակումների վիրավորական և զրպարտչական լինելու հանգամանքը, սակայն միևնույն ժամանակ հանգում է այն եզրակացության, որ պատասխանողը դիտավորություն չի ունեցել վիրավորելու և հնարավորություն չի ունեցել վերաձևակերպելու իր արտահայտությունները, որի պատճառով կատարված արտահայտությունները վիրավորանք և զրպարտություն չի համարվում: Դատարանի նման մոտեցումը վկայում է, որ դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու փոխարեն իրականացվել է Ջհանգիրյանի շահերի ակնհայտ պաշտպանություն, որն ուղղված է արդարադատության դեմ:

2.3.2. Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

«Արժանապատվություն» հասկացությունը, որպես սոցիալական կատեգորիա նախասահմանում է «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակության համապարփակությունը եւ, միաժամանակ՝ բազմիմաստությունը: Որպես սահմանադրական նախադրյալ (իրողություն)՝ անձի արժանապատվությունը հանդես է գալիս մարդու՝ իբրև կենսահոգեբանասոցիալական էության, անհրաժեշտ և անքակտելի որոշիչ հատկանիշ՝ կարգելով նրան որպես սոցիալական կենսագործունեության լիիրավ և իրավահավասար սուբյեկտ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Այլ կերպ ասած, անձը յուրաքանչյուր ոքն է, որն օժտված է անքակտելի, այսինքն՝ անվերապահորեն ճանաչված և ճանաչելի արժանապատվությամբ:

Արժանապատվության ճանաչման և պաշտպանության պահանջը սերտորեն առնչակցում է սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխիքների որոշակիացման հետ (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածին համապատասխան):

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից:

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»:

Գ. Ջհանգիրյանի կողմից կատարված արտահայտություններն արատավորում են հայցվորների պատիվն ու արժանապատվությունը: 2012թ. դեկտեմբերի 18-ին պատասխանողը իր կողմից տրվող հարցազրույցում հայտնում է, որ «Մարդասպանները պետք է նստեն, ես մնում եմ իմ կարծիքին», «դրանք մարդասպան են», «դրանք մարդասպաններ են և պետք է դատվեն, ես չեմ փոխել իմ կարծիքը»: Նշված արտահարությունները պատասխանողի կողմից կատարվել են ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՀՅՔՐԴ1/0046/01/08 քրեական գործով վճռի հրապարակումից հետո, երբ վերը նշված դատարանը՝ Արայիկ Զալյանին, Մուսա Սերոբյանին և Ռազմիկ Սարգսյանին ՀՀ քր. օր-ի 112 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 14-րդ կետերով առաջադրված մեղադրանքում ճանաչել էր անմեղ և արդարացրել:

www.aravot.am և www.lragir.am լրատվական միջոցների լրագրողներն իրենց հարցերը տվել են «Մադաղիսի գործ» անունը ստացած թիվ ՀՅՔՐԴ1/0046/01/08 քրեական գործի շրջանակներում, որի շրջանակներում մենք՝ հայցվորներս, տարիներ շարունակ մեղադրվել ենք չկատարած հանցագործության մեջ:

Պատասխանողը, մեզ մարդասպան անվանելով, մեղադրում է այն ստոր, անբարոյական արարքի մեջ, որի արդյունքում մահացել են 2 հայ զինվոր, ինչը, բնականաբար, բարոյական արժեքներ չունեցող ստոր մարդու կերպար է:

Պատասխանողն իր կողմից կատարված արտահայտություններով նպատակ է ունեցել արատավորելու հայցվորների պատիվն ու արժանապատվությունը: Հարցազրույցների ժամանակ նրա կողմից նման արտահայտություններ անելն այլ նպատակ ունենալ չէր կարող, քանի որ հայցվորներիս մարդասպան անվանելու մեջբերումը հիմնավորող լրատվական միջոցներին որևէ տեղեկություն չի տրամադրվել, կատարված արտահայտությունների հիման վրա որևէ դատողություն չի արվել, հետևաբար՝ արտահայտությունները կատարվել են միայն մեկ նպատակով՝ հայցվորներիս պատիվն ու արժանապատվությունը արատավորելու նպատակով: Բացի այդ, պատասխանողի կողմից չի նշվել և չէր էլ կարող նշվել իր կողմից արատավորող հայտարարությունները հիմնավորող որևէ փաստ, ինչը վկայում է այն մասին, որ նա չի ձեռնարկել միջոցներ տեղեկատվությունը իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար:

2.4. Դատարանի 4-րդ պատճառաբանությունը Գ. Ջհանգիրյանի արտահայտություններում վիրավորանք և զրպարտություն չտեսնելու վերաբերյալ կայանում է հետևյալում.

Անդրադառնալով բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում հղում կատարված Ա1+ հեռուստաընկերության «Պոստ սկրիպտում» հաղորդաշարի հարցազրույցին, ԳԱԼԱ հեռուստաընկերության տեսանյութին, ինչպես նաև վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ (.....)

Նշված իրավանորմի վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից հստակ սահմանվել են վերաքննիչ բողոքի քննության սահմանները՝ ապացույցների գնահատման առումով, մասնավորապես հարկ է նշել, որ Վարաքննիչ դատարանը բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք արդեն իսկ ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

Տվյալ դեպքում, բողոք բերած անձը, նշված ապացույցները չի ներկայացրել ընդհանուր իրավասության դատարանում, սակայն հարկ է նշել, որ վերջինս զրկված չի եղել գործի քննության ժամանակ դրանք ներկայացնելու իր դատավարական իրավունքից, որպիսի պայմաններում հարկ է նշել, որ այդ ապացույցները չեն կարող քննության առարկա դարձվել Վերաքննիչ դատարանում[21]:

2.4.1.ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: **Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար**:

Դատարանի կողմից վկակայակոչված Ա1+ հեռուստաընկերության «Պոստ սկրիպտում» նյութը հրապարակվել է 2013թ. հունիսի 20-ին, որի մասին հայցվոր կողմը իմացել է սույն գործով առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակելուց հետո:

Սույն գործով հայցվորները հայց են ներկայացրել 2013թ. հունվարի 15-ին, հայց ներկայացնելու ժամանակահատվածում տվյալ հրապարակումը չէր կատարվել:

Առաջին ատյանի դատարանը 2013թ. հուլիսի 16-ին կայացրել է հացադիմումը մերժելու մասին վճիռ, հայցվորներիս 2013թ. հունիսի 20-ի Ա1+ հեռուստաընկերության «Պոստ սկրիպտում» հրապարակումը հայտնի է դարձել 2013թ. հուլիսի 16-ին վճռի կայացումից հետո այդ իսկ պատճառով տվյալ փաստական հանգամանքը ներկայացվել է վերաքննիչ դատարան, այլ ոչ թե առաջին ատյանի դատարան:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները և ՀՀ քաղաքացիական դտավարության օրենսգրքի 223-րդ, 226-րդ, 230-րդ և 231-րդ՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

21. Տես՝ սույն բողոքի 1.8.5-րդ կետը

Վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2013թ. նոյեմբերի 27-ի թիվ ԵԱՔԴ/0108/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշումը անբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր կազմով քննության:

Կից ներկայացնում եմ՝

- վերաքննիչ բողոքը պատասխանողին և վճիռ կայացրած դատարան ուղարկելու մասին կապի ծառայության կտրոնները
- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2013թ. նեյեմբերի 27-ի որոշումը
- պետական տուրքից ազատելու մասին միջնորդություն:

Վճռաբեկ բողոք բերող՝ Արայիկ Զալյան

26.12. 2013թ.